26.358

Բ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՆԳԱՄՅԱԿԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

334.6
Հ-63

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1930

334.6
Ա-63

15 JAN 2010

Բ. ՆԵՐՄԻՍՅԱՆ

ՀՆԳԱՄՅԱԿԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵ-ՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒ-ԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԵՐԵՎԱՆ—1929

УКРАЇНІВСЬКА ПРОТОКОЛЬНА ... ВУАПЛ

11 JUL 2013

26-358

БИБЛИОТЕКА
Академії Наук
УРСР

41943 КН

Հրատ. № 1151

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպվ. № 2914(բ) Պատվ. № 1300 Տիր. 5000

ZUBO ANM.SSR

8340-53

ՀՆԳԱՄՅԱԿԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փուլ է գալիս և փոշիանում է բոլոր յերկրների կապիտալիստների վերջին հույսը, վորոնք յերազում են ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման մասին, վորը մասնավոր սեփականության սրբազան սկզբունքն է։ Գյուղացիները, վորոնց նրանք համարում են կապիտալիզմի հողը պատրաստող մի նյութ, մասսայաբար թողնում են մասնավոր սեփականության դրոշը և մտնում են կոլեկտիվիզմի հունը, սոցիալիզմի հունը։ Փուլ է գալիս կապիտալիզմի վերականգնման վերջին հույսը։

(ՍՏԱԼԻՆ)

Շատ չի անցել այն ժամանակից, յերբ շատերը կարծում ելին, թե գյուղատնտեսական կոլեկտիվների կազմակերպումը «ցնորք» է ու անհիմն մի բան։ Կուլակների հետ միասին աջ ոպպորտյունիստներն ել նույն կարծիքին ելին։ Դրա համար ել, վոր կուլակներն ու հակախորհրդային տարրերն սկզբի տարիներում կոլեկտիվների դեմ միայն պասսիվ պայքար ելին մղում, այսինքն վատաբանում ու զանազան պրովոկացիաներ ելին տարածում կոլեկտիվների հասցեին։

Բայց յերկար ժամանակ չանցավ, և նրանց

կարծիքն ու հույսերն ողջ ցնդեցին։ Հայաստանի խորհրդայնացման 9-րդ տարում ու Հայաստանի կոլտնտշարժման 2-րդ տարում (մանավանդ այս վերջին տարում) կոլտնտշարժումը բուռն տեմպ է ընդունել ու առաջ է անցել պլանային բոլոր յեթադրություններից։

Կոլեկտիվացումը դառել է գյուղացիական հիմնական մասի (չքավորի ու միջակի) լայն մասսայական շարժում։

Բատրակների ու չքավոր գյուղացիության յետեւից կոլտնտեսություններն են ձգտում և միջակ գյուղացիները։

Կոլտնտշարժման մեջ ներկա շրջանում նրկատվում են նոր յերևույթներ. միջակների մասսայական հոսանք դեպի կոլտնտեսությունները, խոշոր կոլտնտեսությունների կազմակերպում, հարևան գյուղերի կոլեկտիվների միացում և գյուղերի ու շրջանների 100 տոկ. կոլեկտիվացում։

Կոլեկտիվ շինարարության մեջ վճռական այդ փոփոխությունները հիմնովին քանդում են գյուղի կապիտալիստական ելեմենտների արմատները։ Դրա համար է, որ կուլակը կոլեկտիվների դեմ իր պայքարը ավելի յե սրել։

Կոլտնտշարժման ընդհանուր աճումը յեվ նրա առանձին տեսակների զարգացումը

Հայաստանում 1927 թվին կային միայն 8 կոլեկտիվներ։ 1928 թ. նրանց թիվը հասնում է 55-ի, իսկ 1929 թ. նոյեմբերի 1-ին կոլտնտեսությունների թիվն արդեն հավասար է 260-ի, որը կազմում է 5-ամյակում նախատեսված (540) կոլեկտիվների 48 տոկոսը։

Յեթե նայենք կոլեկտիվների առանձին տեսակների դինամիկային, ապա կտեսնենք, թե ինչպես վերջին տարում աճում է հողագործական ընկերությունների տեսակարար կշիռը ընդհանուրը քանակում, և ինչպես դանդաղ է ընթանում ավելի պարզ ձևերից բարդ ձևերի փոխվելը։ Առաջին հանգամանքն այն դրական կողմը ունի, որ կոլեկտիվներում ավելի շատ են ընդգրկվում միջակները (28 թ. միջակների տոկոսը կազմում եր 19,5, 1929 թ.՝ 25 տոկ.), իսկ 2-րդ հանգամանքի բացասական կողմն այն է, որ դանդաղ են համայնացվում գյուղացիական միջոցները, և համեմատաբար ավելի դանդաղ է ընթանում նրանց կուլտուր-կենցաղային խնդիրների կազմակերպումը։

Ըստ տեսակների կոլտնտեսությունները հետևյալ պատկերն են ներկայացնում.

	1927 թ.	1928 թ.	1929 թ.
Կոմմունաներ	3	5	6
Գյուղատնտեսական արտելներ	3	44	139
Հողագործական ընկերություններ	—	6	115

Կոլեկտիվացման դասավորումը ըստ ոկրուգների (գավառների) յեվ գյուղատնտեսական զոնաների

Կոլտնտեսությունների դասավորումը գավառներում և գյուղատնտեսական տարբեր զոնաներում միատեսակ չէ։ Ներկայումս արդեն պարզորոշ նկատվում է այն, որ կոլտնտեսությունների խոշոր քանակը կենտրոնացած են բամբակային և այգեգործական շրջաններում։ Այդ տեսակետից առաջին տեղն է գրավում Ղուրգուղոլու շրջանը, որտեղ արդեն կոլեկտիվացրած է շրջանի գյուղական տնտեսությունների 17,5 տոկոսը։

Կոլեկտիվների ընդհանուր քանակից Յերևանի գավառում գտնվում են 47,4%-ը, Լենինականի գավառում՝ 13,9%-ը, Լոռի-Փամբակի գավառում՝ 22,5%-ը, Սևանի գավառում՝ 12,2%-ը, իսկ Զանգեզուրի գավառում՝ 4,0%-ը։

	1927 թ.	1928 թ.	1929 թ.
Բամբակի շրջան	16,7%	32,4	40,0
Աշնանացան հացի շրջան	16,7 »	33,4	27,7
Գարնան. հացի շրջան	50,0 »	20,8	16,8
Անասնապահական շրջան	16,6 »	13,5	15,5
	100	100	100

Կոլեկտիվացումը ազգային փոքրամասնության մեջ

Կոլտնտեսարժումն ազգային փոքրամասնության մեջ ավելի ուշ է սկսվել, բայց նա այս մի տարվա ընթացքում բավականաչափ ծավալվել է, բայց և այնպես անհրաժեշտ է աշխատանքի այս ոլորտում ավելի ուժեղ բեկում մտցնել։

Կոլեկտիվացումը ըստ ազգությունների յեվ տարիների

	1927 թ.	1928 թ.	1929 թ.
Հայկական	100%	92%	89%
Թուրքական	—	3 »	7,3 »
Ռուսական	—	2 »	1,2 »
Քրդական և ասորիների	—	—	0,5 »
Խառը	—	3 »	2 »

Կոլտնտեսությունների չափը

Ընթացիկ տարում (1929 թ.) զգալի կերպով նկատվում է կոլտնտեսությունների խոշորացում թե հողի տարածության շատացումով և թե անդամ տնտեսությունների ավելացումով։ Այսպես, որինակ, 1928 թ. միջին հաշվով ամեն մի կոլտնտեսության ընկնում է 56 հեկտար պիտանի հող, իսկ 1929 թ.՝ 69 հեկտար։ Ըստ տնտեսությունների՝ միջին թվով ամեն մեկ կոլտնտեսության ընկնում է 1928 թ. 19,5, իսկ 1929 թ. 28։

Բայց դեռ կան կոլլեկտիվներ, վորոնք կամ քարացած դրության մեջ են—աճման նշաններ չեն ցույց տալիս, կամ աճում են դանդաղ (Դարալագյազ, Զանգեզուր, Շամշադինի շրջան և Սևանի գավառ)։ Վորոշ տեղեր կոլտնտեսություններում դեռ կա հոսուն դրություն նույնիսկ 1928 թ. վերջերին և 1929 թվի սկզբին դեպքեր են յեղել, յերբ կոլլեկտիվը կազմալուծվել է (Արփա, Տեղ, Շնհեր)։

Դեռ կան մանր կոլտնտեսություններ, վորոնք բաղկացած են 10—25 տնտեսությունից և կազմում են ընդհանուր կոլտնտեսությունների մոտ 50 %-ը։

Սրա հետ միասին նկատվում է և հակառակը, վոր ամբողջ գյուղեր կոլլեկտիվանում են,

խոշորանում են կոլլեկտիվները, մի քանի կոլլեկտիվներ միանում են, կազմակերպվում են խոշոր կոլտնտեսություններ։ Կոլլեկտիվում աշխատանքի դիսցիպլինան, արտադրողականության բարձրացումը, արտադրանքի ապրանքային մասի ավելացումն ու արտադրական պրոցեսների մեքենայացումը խոշոր հոսանք են առաջացնում դեպի կոլտնտեսությունը։

Խոշորացման պատկերը տալու համար բերում ենք Ղ.ուրդուղուլու շրջանի մի քանի կոլլեկտիվների խոշորացման թվերը։

Կոլլեկտիվի վայրը	Տնտեսությունների թիվը		
	Առ 1—1 1929 թ.	Առ 1—5 1929 թ.	Առ 1—11 1929 թ.
Մեծ Շահրիարի	32	58	115
Արջարկ	23	54	79
Սարդարաբաղ	25	59	89
Քյալաղարխ	—	23	110
Կրասնարմեյեց	175	175	300
Ղուրդուղուլի	25	40	49
Արմալու	—	17	51
Իսկ շրջանում՝	375	930	1229

Ղուրդուղուլու շրջանի կոլտնտեսաշարժման բուռն տեմպը և Սարդարաբադ կայարանում կառուցվող մեքենատրակտորային կայանը հնարավորություն են տալիս մինչև 1931 թիվը լրիվ կոլեկտիվացման յենթարկել Ղուրդուղուլու շրջանը, իսկ հնգամյակի ընթացքում՝ նաև Հրազդանի, Ղամարլուի, Վաղարշապատի և Լենինականի գավառի առանձին շրջանները։

Կազմակերպվում են 9 խոշոր կոլտնտեսություններ (նախատեսված չեն յեղել հնգամյակում) 11.090 հեկտար հողի վրա, 6419 գլուխ խոշոր և 9000 գլուխ մանր անասուններով։

Կոլտնտեսություններում այժմ ընդգրկված են մոտ 7000 տնտեսություն կամ ամբողջ 5-ամյակի ընթացքում կոլեկտիվացվելիք տնտեսությունների 27%-ը, իսկ Հայաստանի գյուղական տնտեսությունների հանդեպ (Հայաստանի գյուղական տնտեսություններն ընդունելով 160.000)՝ մոտ 4 5%։

Կոլտնտեսաշարժման ուժեղ թափը, Միության մեջ մեքենաշինարարության ու ինդուստրիացման արագ աճումը, Սարդարաբադում կառուցած մեքենատրակտորային կայանը, կոլտնտեսամբակային միություններին կից 1930 թ. (բամբակային շրջաններում և Ցեղվարդի կոլեկտիվում) կազմակերպվելիք տրակտորային կոլոնները և վերջապես 5-ամյակում նախատեսված հեռանկարային թվերի յետ մնալը փաստացի դրությունից պահանջում են վերակազմել կոլտնտեսային արարքության ներկա պլանը՝ նկատի ունենալով վերև թված բոլոր հանգամանքները։

Կոլտնտեսությունների մեքենայացումը

Թեև կոլտնտեսությունների մեքենայացումն անհամեմատ բարձր է անհատական տնտեսության մեքենայացումից, սակայն նա դեռ անչափ յետ է մնում կոլտնտեսաշարժման տեմպից։

1000 հեկտար վարելահողին ընկնում են գյուղմեքենաներ (հատերի հաշվով)

	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1933 թ.
Տրակտոր-կոլտնտես.	—	2,9	3,5	5
» անհատ. տնտես.	0,35	0,4	—	—
Գութան. կոլեկտիվում	36	42,2	26,7	20
» անհատ. տնտես.	24	28,5	—	—
Կալսիչ. կոլտնտեսութ.	0,7	0,3	0,4	0,5
» անհատ. տնտես.	—	—	—	—
Շարքացան կոլտնտես.	8,7	13,0	13,5	17,5
» անհատ. տնտես.	0,1	0,5	—	—

1930 թ. կոլտնտեսություններից արորը գործածությունից ամբողջապես հանվելու է։

Կոլտնտեսությունների հողաշինարարությունը

Կոլտնտեսությունների կայունությունը, նրանց արագ զարգացումն ու կուլտուրական ձևով տնտեսության կազմակերպումը մեծ չափով կախված է նրանց հողաշինարարության աստիճանից և ժամանակին հողերի կենտրոնացումից։ Սակայն այստեղ այս խնդիրը կանոնավոր հիմքերի վրա չի դրված։ Մինչև այժմ կոլեկտիվներում ներքին հողաշինարարություն չի կատարված, և դեռ վորոշված չէ, թե վոր շրջանում ինչպիսի ցանքաշրջանառություն է լինելու։

Կոլտնտեսությունների հողերի կենտրոնացման տեսակետից, անկասկած, դրությունը լավ է։ Կազմակերպվող և խոշորացվող կոլտնտեսությունների հողերը ժամանակին կենտրոնացվում են, բայց այդ կատարվում է անարխիկ ձևով և առանց պլանի։ Այդ հանգամանքը պահանջում է, վոր գյուղերի հողաշինարարության պլանը համաձայնեցվի կոլեկտիվացման պլանին։

Կոլեկտիվներում ավելանում է ցանքսի տարածությունը

1927 թ. ցանվել է կոլեկտիվների ընդհանուր վարելահողի 41.1%-ը, 1928 թ.՝ 54,2%, 1929 թ.՝ 73,8%-ը։ Իսկ Հայաստանում 55%-ից չի անցնում։

Կոլտնտեսությունների մեքենայացման ու ագրիկուլտուրաձեռնարկումների հետևանքով ավելացել է և բերքը։

Բերքը մեկ հեկ. ստացվել է ցենտներով (6 փ.)

	1928 թ.	1929 թ.	1930 թ.
Ցորեն կոլեկտ.	10,2	12,0	13,4
» վոչ կոլեկտ.	8,8	10,3	10,9
Բամ. կոլեկտ.	10,3	11,0	13
» վոչ կոլեկտ.	8,7	9,1	9,7

Կոլտնտեսություններում աճում է նաև ընդհանուր յեկամուտի ապրանքային մասը։ Ընդհանուր յեկամուտը 27 թվին կոլեկտիվներում կազմել է 499,200 ռ., վորից ապրանքային մասը յեղել է 46,7%, 1929 թ. ընդհանուր յեկամուտը կազմում է 4.382.000 ռ., վորի ապրանքային մասը կազմում է 48,2%-ը, իսկ 30 թ. յեկամուտը կազմելու յե 8,428,000 ռ., վորից ապրանքային մասը լինելու յե 51%-ը։

Այս տարի կոլտնտեսությունները հացամթերման կամպանիային հանձնեցին 47.000 փ. հաց (քանակը հասցվելու յե 60.000-ի)։

Կոլտնտեսություններում միջակ գյուղացիության %-ի աճման հետևանքով աճում են նաև կոլտնտեսությունների սեփական միջոցները։ Ցեվ պետության ու վարկային միջոցների ներդրման աճման հետ անընդհատ աճում է

նաև կոլեկտիվների իրենց միջոցը, և նրա տեսակարար կշիռն սկսում է բարձրանալ ընդհանուր կապիտալ ներդրումների մեջ։ Իսկ սեփական միջոցների աճումն ապացուցում է կոլտնտեսությունների կայունությունը։ Կապիտալ ներդրումները կոլտնտեսություններում ըստ տարիների կազմում են՝

	1927 թ.	1928 թ.	1929 թ.
Ընդամենը	569.400	1.408.000	4.086.000 ռ.
Վ.որից պետական և վարկեր	92,3%	56%	33%
Կոլեկտիվների սեփ. միջոցներ	7,7%	44,0%	67%

Աճասնապահությունը կոլտնտեսություններում

Կոլտնտեսությունների դաշտավարության մեջ նկատվող նվաճումները (անհատ տնտեսությունների հանդեպ) համարյա բացակայում են անասնապահության մեջ։ Այստեղ անհամեմատ թույլ է նաև կաթնատնտեսության մեքենայացումը։ Կաթնատու և մսացու անասունների թիվը դանդաղ է աճում, վորը բացատրվում է նրանով, վոր այս ճյուղն ավելի մեծ կապիտալ ներդրումներ է պահանջում, իսկ այդ նպատակի համար վարկերը չնչին են, իսկ կոլտնտեսությունների միջոցներն աննշան են այդ ճյուղի զարգացման համար։

Աշխատանքի կազմակերպման խնդիրները կոլտնտեսություններում

Աշխատանքի ճիշտ կազմակերպումն, անկասկած, սերտորեն կապված է արտադրության կազմակերպումից։ Իսկ յերբ կոլտնտեսություններում, տնտեսավարության ու արտադրության կազմակերպման մեջ, համեմատած անհատական տնտեսություններին, դեռ շատ աննշան փոփոխություն է մտցված, և յերբ կոլտնտեսությունները դեռ շատ թույլ են մեքենայացված, բացակայում են արդյունաբերական ձեռնարկությունները, ու թույլ է կազմակերպված տնայնագործությունը կոլտնտեսություններում, ապա պարզ է, վոր նման պայմաններում աշխատանքի կազմակերպվածությունը մեծ չափով չի տարբերվելու անհատական տնտեսություններից։ Աշխատանքի անկազմակերպվածության արդյունքն է, վոր տարվա վորոշ ժամանակներում կոլտնտեսություններում լինում են աշխատանքի ազատ ձեռքեր։ Տնտեսության զարգացման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման տեսակետից կարևոր նշանակություն ունի աշխատանքի վարձատրման խնդիրը։ Այդ խնդիրը տարբեր կոլեկտիվներում տարբեր է դրված։ Անհրաժեշտ է հաշվի առնել այդ և մշակել նույնանմանություն կոլտնտեսություններում։

Կուլտ-կենցաղային խնդիրները կոլտնտեսություններում

Կոլտնտեսությունների սոցիալական կազմը (67,8% չքավոր, 7,2% բատրակ և 25% միջակ), որից 75%-ը չքավորներ ու բատրակներ են, ցույց է տալիս, որ կոլտնտեսություններում անգրագիտությունն ավելի մեծ տեղ պետք է գրավի, քան շրջապատի ազգաբնակության մեջ։ Մեծ չափերի չէ հասնում անգրագիտությունը, մանավանդ կոլլեկտիվի անդամ կանանց մեջ։

109 ուսումնասիրված կոլտնտեսություններում անգրագիտության հաշվառումը հետևյալ պատկերն է տալիս. 16—45 տարեկաններից տղամարդիկ գրագետ են 34,7%, կիսագրագետ՝ 48,3%, իսկ անգրագետ՝ 17%։ Նույն հասակի կանայք գրագետ՝9,2%, կիսագրագետ՝ 25,8%, անգրագետ՝ 65%։ Կոլտնտեսություններում անգրագիտության մեծ տոկոսը դժվարացնում է կոլտնտեսությունների առաջ դրած խնդիրների շտապ լուծումը։

Գյուղում կապիտալիստական տարրերի վրա սոցիալիստական հարձակման հետևանքով տարվող պայքարի ընթացքում կոլտնտեսությունները պետք է դառնան պրոլետարիատի ոչ միայն տնտեսական պայքարի, այլ նաև գյուղում կուլտակային ու մանր-բուրժուական իդեոլոգիաների դեմ ժողովրդի իդեոլոգիական պայքարի հենարանները։

Կոլտնտեսությունների տասնյակ հազարավոր ազգաբնակությունը պետք է դաստիարակվի պրոլետարական վոգով։ Նրանցից պետք է պատրաստվեն սոցիալիստական շինարարության ակտիվ մարտիկներ։ Ահա այս խնդիրներն են, որոնք հնգամյակի ընթացքում պետք է կազմեն կոլտնտեսություններում տարվող կուլտդաստիարակչական աշխատանքների բովանդակությունը։

Կոլտնտեսությունների հերթական խնդիրները

Վերևում ասացինք, որ գյուղի սոցիալիստական վերակառուցման հետևանքով գյուղում ավելի չէ սրվել դասակարգային պայքարը։ Այս հանգամանքը խնդիր է դնում, որ կոլտնտշինարարության հնգամյակում որոշակի ընդգծել, թե ինչպիսի սոցիալիստական տարրերից պետք է կազմակերպվեն կոլտնտեսությունները։ Կոլտնտշարժման ընթացքում չպետք է թուլացվի չքավորների և բատրակների ներգրավման գործը։

Այս խնդրի վրա պետք է հրավիրվի կոոպերատիվ, հասարակական և պրոֆեսիոնալ կազ-

8340-57

ՀԱՅԿՈՍՏՈՒ ՊՐՈՒԴՈՎԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մակերպությունների ուշադրությունը։ Անհրաժեշտ է ավելի ուժեղացնել միջակների ներգրավումը կոլտնտեսություններում։

Այսպիսով առաջիկա տարիներում կոլտնտշինարարության սոցիալ-տնտեսական հիմնական դրույթը պետք ելնեն՝

1. Քաղաքի գյուղացիների և բատրակների ամենայն կերպ ներգրավումը կոլտնտշինարարության մեջ։

2. Ավելի բարձր թափ միջակների կոլեկտիվացման գործում։

3. Կուլակության դեմ ուժեղ հարձակում ու անողոք պայքար, որն ակտիվ պայքար է մղում գյուղի սոցիալիստական վերակառուցման դեմ ու նյութական վնասներ հասցնում կոլտնտեսություններին։ (Իշևանի կոլտնտեսության խոտի հրկիզումը. Գոլքյանդի կոլտնտեսության անասունների սպանելը և յեղների վոտքերը կտրելը. Դսեղի կոլտնտեսության խոտի դեզերը հրկիզելը և յեղների ժայռից գլորելը. Թաուզի կոլտնտեսության խոտի դեզերի հրկիզելը և այլն և այլն)։

Քաղաքի և միջակ գյուղացիության դաշինքի ամրացումը, նրանց մասսայականորեն կոլեկտիվացումն ու կուլակության դեմ հատուկ դասակարգային ճիշտ գիծ տանելը պետք է լինի կուլակության՝ կոլխոզնիկներին ահաբեկելու և կոլտնտեսությունները քանդել ցանկանալու պատասխանը։

Ընդունելությունների ժամանակ և կոլընտեսությունների սոցկազմի պարբերաբար ստուգումով պետք է աշխատել յերևան հանել կոլընտվնասարարներին ու միանգամայն պետք է չեզոքացնել կուլակին ու ձայնազուրկին, կոլընտշինարարությունից, այդ խնդրում ղեկավարվելով անշեղ կերպով կոմկուսի նոյեմբերյան պլենումի վորոշումներով։

Շրջանների ու գյուղերի լրիվ կոլեկտիվացում ու խոշոր կոլտնտեսությունների կազմակերպում

Կոլտնտշարժման ներկա տեմպն ու միջակների մասսայական ձգտումը դեպի կոլտնտեսությունները, պրոլ. պետության կուլտուրական ու նյութական միջոցների աճումը գյուղատնտեսական մեքենաշինարարության ուժեղ զարգացումը կոլտնտշարժման մեջ մի նոր էջ են բացում։ Այդ նորությունը, խոշոր կոլտնտեսությունների կազմակերպումն ու ամբողջ շրջանների ու գյուղերի կոլեկտիվացումն է։ Այս խնդրին մեծ չափով աջակցելու յեն արտադրական կոնտրակտացիան և գյուղկոոպերացիայի վերակազմակերպումը, նրա նոր սիստեմը, վորոնք կոլեկտիվացնում են գյուղացիության արտադրական պրոցեսների առաջին աստիճանը։

Այս ասպարիզում խնդիր է դրվում՝ խոշորացնել գոյություն ունեցող և նոր կազմակերպվող մանր կոլլեկտիվները։ Կազմակերպել հատուկ խոշոր կոլլեկտիվներ (հատուկ կոլլեկտիվ կոչվում է 300 գլուխ կամ 5—10 հազար մանր անասուններ ունեցող անասնապահական և 500 հեկտար բաժնակագործական, և 1000 հեկտար հացաբուծական կոլլեկտիվները) գոյություն ունեցող կոլլեկտիվների միացման և ընդունելությունների միջոցով։ Ապահովել խոշոր կոլլեկտիվները մեքենաներով և ագրոնոմներով։ Վորոշակի աշխատանք տանել գյուղերի և շրջանների լրիվ կոլլեկտիվացման, լայնացնել խմբակային (кустовые) միությունների ցանցը և նրանց աշխատանքներն այնպես վերակազմել, վոր նրանք կազմակերպչական կենտրոններից բացի, վոր գլխավորն է, դառնան և արտադրա-պլանային կենտրոններ։

Դիմ վերցնել, վորպեսզի կոլտնտեսությունները անպայման և կարճ ժամանակում բոլորն էլ դառնան ապրանքային։ Այդ տեսակետից անշուշտ ճիշտ է, վոր կոլտնտեսություններն առաջին հերթին ծավալվում են ապրանքային շրջաններում, վորը միանգամայն համապատասխանում է այն խնդիրներին, վորոնք դրված են կոլտնտեսությունների առաջ։ Մյուս կողմից կոլլեկտիվ շարժման

առաջ լեռնային շրջաններում դրված է խնդիրը՝ զարկ տալ այդ շրջանների տնտեսության ապրանքայնացմանը։

Կոլտնտեսությունների կայունացումը

Կոլլեկտիվների կայունացումը կախված է սեփական միջոցների ավելացումից, ինչպես համայնացման միջոցով, նույնպես և կուտակման ու տնտեսության մեքենայացման, աշխատանքի ռացիոնալացման և արտադրողականության բարձրացման միջոցով։ Դրա համար անհրաժեշտ է՝

1. Լրիվ կերպով համայնացնել անդամների արտադրական բոլոր միջոցները։

2. Կանոնավորել կուտակումների և անբաժանելի դրամագլուխների գործը։

3. Մասնագիտացնել տնտեսությունը, հրաժարվելով տնտեսության համար զարգացման հեռանկարներ չունեցող ճյուղերից։ Գյուղատնտեսական բարդ ու խոշոր մեքենաները, ռացիոնալ ոգտագործելու և լրիվ բեռնավորում տալու համար, կենտրոնացնել խմբակային միություններում։

4. Ըստ հնարավորության կազմակերպել տնտեսության մեջ ոժանդակ ճյուղեր (տնայնագործությունը և գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունները) այն-

պես, վոր աշխատավոր անդամներն աշխատեն ամբողջ տարին։

5. Բարձրացնել աշխատանքի դիսցիպլինան և արտադրողականությունը աշխատանքի վարձատրման ձևերի (շահագրգռման) և ընկերական ներգործումների միջոցով։

6. Լայն կերպով ծավալել սոց-մրցումը անդամների, խմբակների, գյուղի սովխոզի և քաղաքի արդյունաբերական ձեռնարկների հետ։

7. Խտացնել ինքնաքննադատությունը կոլխոզներում, դնել զեկուցումներ չքավորական ու համայնքի ժողովներում։

8. Կանոնավորել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները։

9. Կանանց լրիվ կերպով մասնակից դարձնել արտադրությանը և ժողովներում քննվող խնդիրների լուծմանը և ընդհանրապես կոլխոզների ղեկավարման գործում։

10. Կանոնավորել հաշվապահությունը և վիճակագրական հաշվառման գործը։

11. Ստեղծել վարկային ուժեղ դիսցիպլինա (վարկը նպատակին ծառայեցնել և ժամանակին վերադարձնել)։

12. Անշեղ և ժամանակին կատարել կոնտրակտացիայի պայմանները և այնպես անել, վոր կոլտնտեսության ամբողջ ավելցուկն անցնի պետական և կոոպերատիվ մթերող ժարմինների միջոցով։

13. Բարձրացնել բերքատվությունը և արտադրանքի ապրանքային մասը։

Այս խնդիրների լուծումն անշուշտ կապահովի կոլխոզային շարժման ուժեղ զարգացումը։ Դրա հետ միասին կուժեղանա և ավելի պարզ ձևի կոլեկտիվներից ավելի բարդ ձևին անցնելը։ (Հողագործականից արտելի և արտելից կոմունայի)։

Ագրոտեխնիկական խնդիրների սպասարկման և կադրերի խնդիրը

Կոլտնտշարժման ուժեղ տեմպը և կոլտնտեսությունների առաջ դրած խոշոր քաղաքական, տնտեսական և կազմակերպչական խնդիրների լուծումը, իրենց ամբողջ ծավալով, դնում են կոլտնտկադրերի պատրաստման խնդիրը։

Բերքատվության բարձրացումը, ապրանքայնության ավելացումը և սոցիալիստական սեկտորի դերի և մասնակցության տեսակարար կշռի բարձրացումը գյուղատնտեսական մթերքների ընհանուր շրջանառության մեջ, խնդիր են դնում ապահովել կոլտնտսիստեմը ագրոնոմներով։ Հնդամյակում կոլտնտսիստեմը կարիք է զգում 63 բարձրագույն կրթություն ունեցող ագրոնոմի, ինժեների, 318 միջնակարգ կրթու-

թյամբ նեղ մասնագետների և 2318 տարրական (նախագահ, հաշվապահ և այլն) աշխատողների։

Ներկայումս ագրոնոմների պակասը հնարավորություն չի տալիս լայնացնել խմբակային միությունների ցանցը։ 30 թ. խմբակային միությունների թիվը հասցվելու է միայն 24-ի, հետագայում խմբային միությունների մեջ պետք է ընդգրկել այնքան կոլտնտեսություն, որ նրանք սպասարկվեն ագրոնոմի կողմից։

Կոլտնտեսությունների ստորին կադրեր պատրաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի գավառներում կամ շրջաններում բացվեն (նախագահների, հաշվապահների) կարճատև դասընթացներ։ Իսկ Լուսժողկոմատն էլ իր հերթին պետք է կոնկրետ ձեռնարկումների անցնի, նամանավանդ բարձրորակ կադրերի պատրաստման խնդրում։

Հողային մարմինների և կազմակերպությունների ագրոնոմները շատ անելիքներ ունեն կոլտնտշինարարության ասպարիզում, սակայն որոշ տեղեր այնպիսի թյուր հասկացողություն կա, որ իբր թե դրանք չպետք է սպասարկեն կոլտնտեսություններին։

Վիրը պետք է լինի այդ ագրոնոմների անելիքը։

Կոլլեկտիվներին ագրոտեխնիկական սպասարկման և գյուղատնտեսության կոլլեկտիվացման ասպարիզում հողային և կոոպերատիվ գծով աշխատող ագրոնոմների անելիքները պիտի լինեն՝

1. Պարզ, հասարակ արտադրական միությունների կազմակերպում և նրանց սպասարկում։

2. Կոլլեկտիվ միությունների կողմից պլանով նախատեսված կոլտնտեսությունների կազմակերպում և

3. Կոլտնտեսության առանձին ճյուղերի սպասարկում։

Հողային մարմինների և կոոպագրոնոմների կողմից տարվող կոլլեկտիվացման և ագրոնոմիական սպասարկման աշխատանքները պետք է ընթանան ընդհանուր պլանով, որը պետք է մշակվի կոլլեկտիվ կենտրոնների կողմից և համաձայնեցված լինի հողային մարմինների հետ։

Կոլտնտագրոնոմ-կազմակերպիչը, բացի ագրոնոմիական սովորական գիտելիքներից, պետք է իմանա և կոլտնտշինարարության թեորիան և պրակտիկան. այդ պայմանով միայն նա կկարողանա ճիշտ դասավորել տնտեսության զարգացման հեռանկար ունեցող ճյուղերը և նրանց իրար հետ համաձայնեցումը։ Ճիշտ կերպով դնել կոլտնտեսության աշխատող ուժերի ոգտագործումը

և ճիշտ ոգտագործել արտադրության միջոցները։

Կարևոր նշանակություն ունի կոլխոզնիկներից ագրոնոմիական տարրական գիտելիքներ իմացող աշխատակիցներ պատրաստելը։ Այս խնդրի մասին լուրջ կերպով պետք է մտածեն Կոլխոզկենտրոնը և Լուսժողկոմատը. անհրաժեշտ է այդորինակ ակտիվ պատրաստելու համար կազմակերպել գյուղատնտեսական տեխնիկումներ կոլխոզխմբակային միությունների կից։

Կոլխոզաշխատակիցների այն պահանջները, որ ղգացվում է հնգամյակում, անշուշտ պետք է լրացվեն կոլխոզակտիվի պատրաստման և վերապատրաստման միջոցով, հենց կոլտնտեսություններում և կարճատև կուրսերում։

Կուլտուր-կենցաղային խնդիրների բնագավառում

Կուլտուր-կենցաղային շինարարությունը կոլխոզներում պետք է բղխի գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրներից։ Ուստի անհրաժեշտ է, որպեսզի կուլտուր-կենցաղային ձեռնարկումները սերտորեն կապված լինեն տվյալ կոլտնտեսության արտադրական պրոցեսների հետ։ Կոլտնտեսություններն իրենց տնտեսական կուլտուր-կենցաղային շինարարությամբ պետք է ազդեն և ներգործում ունենան շրջապատի գյուղացիության վրա, նրանց քաշելու դեպի արտադրական կոոպերացումը (կոլլեկտիվացումը)։

Կոլտնտեսություններում այս խնդիրների կազմակերպումը միայն կոլտնտեսությունների վրա չի դրված։ Այս գործն անմիջական աշխատանքն է նաև՝ ժողովրդական լուսավորության, առողջապահության, կոոպերացիայի, Հողժողկոմատի, պրոֆկազմակերպությունների, շեֆընկերությունների ու հասարակական կազմակերպությունների։

Առաջիկա հնգամյակում անգրագետ կոլխոզնիկ չպետք է լինի։ Բոլոր կոլտնտեսություններին կից պիտի լինեն մանկական ասուրներ և պարտեզներ ու հրապարակներ։ Խոշոր կոլտնտեսություններին կից՝ լվացքատներ, հացի փռեր, բաղանիք, ընդհանուր ճաշարան, սպորտ-հրապարակ, ակումբ, գրադարան-ընթերցարան, ռազմական խմբակներ, անաստվածների խմբակ, ՄՈՊՐ-ի բջիջ, բուժակայաններ և բժշկակայաններ, առաջին աստիճանի դպրոցներ, կոլտնտեսություններին մոտ գյուղերիտ դպրոցներ։ Գյուղատնտեսական առաջին աստիճանի դպրոցները պետք է վերակազմվեն և վերածվեն կոլտնտեսությունների յերեխաների դպրոց-կոլխոզների։

Խմբակային միություններին կից պետք է կազմակերպվեն գյուղատնտեսական տեխնիկումներ կոլխոզնիկների համար և այլն։ Այս բոլոր

ձեռնարկումների համար կոլտնտեսությունները պետք է իրենց յեկամուտներից զգալի %-ները հատկացնեն և պլանային կերպով կազմակերպեն այդ աշխատանքները, վերև թված կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ ու մասնակցությամբ։

Վերև թված և այլ համապատասխան կազմակերպություններն իրենց գծով տարվող կուլտկրթական աշխատանքների հնգամյա պլանում խոշոր տեղ պիտի տան այդ խնդիրների կազմակերպմանը, նախատեսելով ու տալով նյութական միջոցներ և մարդկային ուժ։

Կոլտնտեսություններում անհրաժեշտ է կազմակերպել քաղդաստիարակչական գործը։ Կոլխոզնիկն անպայման պիտի վերացնի իր քաղաքական անգրագիտությունը։ Այս խնդիրը լուծելու համար պետք է կոլտնտեսություններին կից կազմակերպել քաղխմբակներ, պատժողներ, կանոնավորել կոլխոզնիկների ինքնազարգացման գործը։ Հաճախակի ունենալ կուսբջիջների դռնբաց նիստեր և կոմսոմոլի ժողովներ և կանոնավորել թերթի (ուր հնարավոր է, հրատարակել պատի թերթ), կինոյի և ռադիոյի գործը։

ՀԱՅԿՈՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ZUUՌ ԱՐՄ.ՍՍՌ

«Ազգային գրադարան»
NL0204314

1930/29

ԳԻՆԸ 8 ԿՈՊ. Մ. (1 ռ.)

Б. Нерсисян

Пятилетка и строительство колхозов в Сов. Армении

Госиздат СССР Армении
Эривань—1930